ազատ և ծախն նորոգութեան 'ի տանէն հայոց և հարկն անցաւորաց մտցէ առ 'ի տունն հայոց։

ԳԼՈՒԽ ՆԶ.

Ով ոք որ ունիցի երկիր 'ի փապարս լերանց որում կարիցէ հանել քարէզ անցուցանելով ջուր 'ի յերեսս երկրի, եթէ կամիցի նա ծախիւք իւրօք բանալ քարէզ և հանել ջուր, և ջուրն այն վաճառել առ այլ, ազատ լիցի 'ի այսպիսի արդեանց հատուցանելով տասանորդն եկամտի ջրից իւրոյ տարեկանի իւրոյ առ տունն հայոց։

ԳԼՈՒԽ ՆԷ.

Ամենայն մարդ կարող է ծախիւք իւրօք կազմել կամ ջրաղաց 'ի վերայ երկրին իւրոյ 'ի ափն գետոց, և կամ հողմ աղացս 'ի վերայ բլրի իւրոյ որքան որ կամի, հատուցանելով տասանորդս 'ի տարեկան եկամտէ իւրմէ 'ի տանն հայոց։

ԳԼՈՒԽ ՆԸ.

Ամենայն Տեառն յերկրի եթէ 'ի յերեսս դաշտի, և եթէ 'ի մէջ քաղաքաց և գեօղից, եթէ կազմեալ տանց և եթէ այգեստանեաց, և եթէ ամայի դաշտից և այլն, եթէ թղթաւ գնեալ 'ի յառնէ վաճառողէ, և եթէ հրամանաւ ստացեալ 'ի տանէն հայոց, եթէ գուցէ զի գացի 'ի խոր